ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ
№2026-1-1-Ա

ք. Երևան 12.03.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի մարտի 12-ի նիստում քննարկեց 2025 թվականի փետրվարի 7-ին տնօրեն Լ. Գևորգյանի կողմից ներկայացված «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ ընկերության անունով «Ararat» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում դաս 34 «ծխախոտ, սիգարետներ, սիգար» ապրանքների համար 2015թ. հունվարի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ «Ինտերնեյշնլ Մասիս տաբակ» ՍՊԸ ընկերության կողմից ի լրումն ներկայացված է գրություն «Ararat» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2017թ. հունվարի 1-ի դրությամբ դաս 34 «ծխախոտ, սիգարետներ» ապրանքների համար հանրահայտ ճանաչելու վերաբերյալ: Նաև նշեց, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում կան բավարար տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ «Ararat» համակցված ապրանքային նշանը օգտագործման արդյունքում 01.01.2017 թվականի դրությամբ լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության համապատասխան շրջանակների համար այն ապրանքների նկատմամբ, որոնց համար օգտագործվել է ապրանքային նշանը: Բերված տեղեկությունները ցույց են տալիս, որ «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ն հանդիսանում է տվյալ ոլորտում խոշոր արտադրող, հաստատել է իր կայուն տեղը հայկական շուկայում և ունի արտադրատեսակների լայն ընտրանի:

Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն ներկայացված ապրանքային նշանը կարող է ճանաչվել հանրահայտ ՀՀ-ում «ծխախոտ, սիգարետներ» ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի մյուս անդամները ևս արտահայտեցին իրենց կարծիքը և համաձայնվեցին կոլեգիայի քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 82-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Ararat» ապրանքային նշանը 01.01.2017թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ԱԾՄԴ 34-րդ դասի «ծխախոտ, սիգարետներ» ապրանքների համար հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը ամբողջովին բավարարել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ